Հավելված N 1
ՀՀ կառավարության 2026 թվականի
մարտի 26-ի N 387-Լ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
ԽԱՂՈՂ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Խաղող վերամշակող տնտեսավարողների աջակցության ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակն է աջակցել հանրապետության խաղող վերամշակող տնտեսավարողներին արտահանման խնդիրներով պայմանավորված ֆինանսական ռիսկերը մեղմելու, ֆինանսական միջոցների ժամանակավոր հասանելիության հնարավորություն ստեղծելու, մարտահրավերներին դիմակայելու և բնականոն գործունեությունը շարունակելու համար:

2. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2. Ծրագրի մասնակիցներն են՝

1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն).

2) 2025 թվականին խաղողի մթերումներ իրականացրած իրավաբանական անձինք (այսուհետ՝ կազմակերպություն).

3) ցանկացած բանկ և վարկային կազմակերպություն (այսուհետ՝ ՖԿ), որը բավարարում է ծրագրի պահանջները և ծրագրի պայմաններին համապատասխան վարկ է տրամադրում 2025 թվականին խաղողի մթերումներ իրականացրած կազմակերպություններին.

4) նախարարության «Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկ (այսուհետ՝ ՏԶՖԿ):

3. Ծրագրի իմաստով շահառու է համարվում 2025 թվականին առնվազն 10000 տոննա խաղողի մթերումներ իրականացրած կազմակերպությունը:

4. Ծրագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից մինչև 180 օրվա ընթացքում շահառուն կարող է դիմել ՖԿ-ին ծրագրի պահանջներին համապատասխան վարկեր ներգրավելու համար:

5. Աջակցությունը տրամադրվում է ՖԿ-ների կողմից շահառուներին տրամադրված նպատակային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ձևով:

6. Սուբսիդավորվում են այն վարկերի տոկոսադրույքները, որոնք տրամադրվում են շահառուներին հետևյալ ծախսերի իրականացման նպատակով՝

1) շահառուի աշխատակիցներին աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ.

2) պետական կամ համայնքի բյուջե հարկեր և պարտադիր վճարումներ:

7. Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր շահառուին տրամադրվող վարկերի հանրագումարի առավելագույն սահմանաչափը չի կարող գերազանցել 1000.0 մլն դրամը, իսկ ծրագրի վարկային պորտֆելը՝ 4000.0 մլն դրամը:

8. Վարկային միջոցների հաշվին շահառուն վճարում է աշխատակիցներին աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների և պետական կամ համայնքի բյուջե հարկերի ու պարտադիր վճարումների գումարի այն տոկոսի չափով, որը հավասար է շահառուի կողմից 2025 թվականին արտահանված արտադրանքի ընդհանուր արժեքի և իրացված արտադրանքի ընդհանուր արժեքի հարաբերակցության տոկոսին:

9. Վարկի ներգրավման գործընթացը նախաձեռնում է շահառուն, որն այդ նպատակով դիմում (այսուհետ՝ դիմում) է ՖԿ-ին՝ դիմումին կցելով ծրագրի 3-րդ կետում նշված պահանջը հիմնավորող փաստաթղթերը, տեղեկանք շահառուից՝ 2025 թվականին իրացված արտադրանքի ընդհանուր արժեքի չափի մասին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանք՝ 2025 թվականին արտահանված արտադրանքի ընդհանուր արժեքի մասին:

10. ՖԿ-ն շահառուից դիմումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում նախարարության secretariat@mineconomy.am էլեկտրոնային փոստին ներկայացնում է տեղեկատվություն՝ շահառուի անվանման և ներգրավվող վարկի գումարի չափի վերաբերյալ՝ ըստ ուղղությունների:

11. Նախարարությունից ծրագրի 10-րդ կետում նշված տեղեկատվությունն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ՖԿ-ին ներկայացնում է դրական կամ բացասական դիրքորոշում: Դրական դիրքորոշում ստանալուց հետո ՖԿ-ն սկսում է վարկային դիմումի ուսումնասիրության գործընթացը:

12. Դիմումի հիման վրա ծրագրի 3-րդ կետում նշված պահանջի ապահովման և վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման դեպքում ՖԿ-ն հաստատում է վարկային գիծ կամ վարկային սահմանաչափ: Վարկային սահմանաչափի շրջանակներում շահառուի կողմից ներկայացված դիմումների հիման վրա տրամադրում են առանձին վարկեր: Վարկերի տոկոսադրույքները հաշվարկվում են ոչ թե ՖԿ-ի կողմից հաստատված վարկային սահմանաչափի հիման վրա, այլ դրա շրջանակներում տրամադրված առանձին վարկերի մնացորդների վրա:

13. Յուրաքանչյուր շահառուի համար վարկային գիծը կամ վարկային սահմանաչափը հաստատվում է մեկ անգամ:

14. Վարկային դիմումի ուսումնասիրության գործընթացի ավարտից հետո ՖԿ-ն երեք աշխատանքային օրվա ընթացքում նախարարության secretariat@mineconomy.am էլեկտրոնային փոստին ներկայացնում է տեղեկատվություն՝ դիմումի մերժման, կամ վարկի տրամադրման մասով կայացված որոշման մասին՝ նշելով հաստատված վարկային գծի չափը, կամ վարկային սահմանաչափը կամ տրամադրվող վարկի չափը և դրա շրջանակներում բյուջետային երաշխիքի տրամադրման անհրաժեշտությունը և չափը:

15. Վարկային միջոցների հաշվին պարտավորությունների դիմաց ծրագրի 8-րդ կետով հաշվարկված տոկոսի չափով վճարումները շահառուին կատարվում են ՖԿ-ի կողմից բացառապես անկանխիկ եղանակով՝ շահառուների կողմից ՖԿ-ին տրամադրված պարտավորությունների չափը հիմնավորող փաստաթղթերի (աշխատավարձի

և դրան հավասարեցված վճարումների գծով առկա պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք և հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածք) հիման վրա:

16. Վարկային միջոցների հաշվին շահառուն կարող է կատարել դիմումի հաստատմանը նախորդող ժամանակահատվածում առկա, ինչպես նաև դրանից հետո գոյացող պարտավորությունների ծրագրի 8-րդ կետով հաշվարկված տոկոսի չափով վճարումներ:

17. Ապագայում գոյացող պարտավորությունների վճարումների նպատակով ՖԿ-ի կողմից կարող է հաստատվել միայն վարկային սահմանաչափ՝ շահառուի կողմից ներկայացված գոյացող պարտավորությունների կանխատեսումների՝ ծրագրի 8-րդ կետով հաշվարկված տոկոսի չափի հիման վրա:

18. Ծրագրով ՖԿ-ների կողմից տրամադրվող նպատակային վարկերի պայմաններն են՝

1) վարկը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության դրամով առավելագույնը տարեկան մինչև 14 տոկոս փաստացի տոկոսադրույքով, ընդ որում, վարկի հետ կապված ՖԿ-ի ծառայությունների համար այլ վճարներ չեն գանձվում (կանխիկացման վճար, սպասարկման վճար, միջնորդավճարներ և այլն).

2) սուբսիդավորվում է տրամադրված վարկի տոկոսադրույքի տարեկան 10 տոկոսային կետին համարժեք մասը (գումարը).

3) վարկերն ունեն առավելագույնը 48 ամիս մարման ժամկետ, իսկ վարկի մայր գումարի մարման համար սահմանված արտոնյալ ժամկետը վարկը տրամադրելու պահից հաշվարկվելու է ոչ ավելի, քան 24 ամիս.

4) ՖԿ-ին ՏՋՖԿ-ի կողմից վարկի տոկոսադրույքի առաջին ամսվա սուբսիդավորվող գումարի փոխանցումն իրականացվում է վարկի տրամադրելու պահից մինչև 3 ամսվա ընթացքում, այնուհետև յուրաքանչյուր ամիս՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև 22-րդ աշխատանքային օրը.

5) վարկի մայր գումարը և վարկի տոկոսադրույքը վարկառուի ցանկությամբ վաղաժամ մարելու դեպքում տույժեր և (կամ) տուգանքներ չեն գանձվում.

6) տույժերը և (կամ) տուգանքները սուբսիդավորման ենթակա չեն.

7) տոկոսավճարի չափը հաշվարկվում է վարկի մայր գումարի մնացորդի նկատմամբ.

8) վարկի պայմանագրի գումարի մարումն իրականացվում է ըստ ամիսների՝ մայր գումարի հավասարաչափ վճարման եղանակով:

19. ՖԿ-ի և վարկառուի միջև կնքված վարկի տրամադրման մասին պայմանագրում պետք է նախատեսվեն դրույթներ հետևյալի մասին՝

1) վարկառուին տրամադրված վարկի չափը (գումարը) չպետք է գերազանցի ծրագրի 7-րդ կետով սահմանված սահմանաչափը, իսկ տոկոսադրույքը սուբսիդավորվում է ՏԶՖԿ-ի միջոցով.

2) վարկի ծախսի չափն ըստ ուղղությունների.

3) վարկի սուբսիդավորվող տոկոսագումարի և սուբսիդավորման դադարեցման պայմանների վերաբերյալ՝ ծրագրով սահմանված պահանջներին համապատասխան.

4) պայմանագրին կից վարկի մարման ժամանակացույցում պետք է առանձնացված տողով նշվեն վարկի ամբողջ տոկոսագումարը, վարկառուի կողմից ՖԿ-ին վճարման ենթակա տոկոսագումարի չափը և ՏԶՖԿ-ի կողմից վարկի սուբսիդավորվող տոկոսագումարի չափը:

20. Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գործընթացը՝

1) վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գործընթացը նախաձեռնում են ՖԿ-ները.

2) վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումն իրականացվում է ՏԶՖԿ-ի միջոցով՝ նախարարության և ՏԶՖԿ-ի միջև կնքված սուբսիդիայի հատկացման պայմանագրի հիման վրա՝ պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակում.

3) ՏԶՖԿ-ի կողմից վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարները ՖԿ-ին հատկացվում են ՏԶՖԿ-ի և ՖԿ-ի միջև կնքվող երկկողմ պայմանագրի հիման վրա.

4) ՖԿ-ն հայտը ներկայացնում է ՏԶՖԿ-ին մինչև վարկառուների կողմից վարկի սուբսիդավորվող տոկոսների փաստացի մարումներին հաջորդող ամսվա յոթերորդ աշխատանքային օրը, ընդ որում յուրաքանչյուր հաջորդ ամիս ներկայացվող սուբսիդավորման հայտի մեջ ներառվում են բացառապես նախորդ ամսվա համար հաշվարկված (բացառությամբ ծրագրի 18-րդ կետի 4-րդ ենթակետում նշված վարկի տոկոսադրույքի առաջին ամսվա սուբսիդավորվող գումարների) սուբսիդավորման ենթակա տոկոսադրույքների գումարները.

5) ՏԶՖԿ-ն ՖԿ-ներից վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարների հայտերը ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է դրանք և նախարարություն է ներկայացնում գրություն տվյալ ամսվա սուբսիդավորման գումարները հատկացնելու վերաբերյալ.

6) ՏԶՖԿ-ի կողմից տվյալ ամսվա սուբսիդավորման գումարների հատկացման վերաբերյալ նախարարություն ներկայացված գրության ստացման օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է սուբսիդավորման գումարների հատկացումը ՏԶՖԿ-ին.

7) ՏԶՖԿ-ն ՖԿ-ի և ՏԶՖԿ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով և նախարարությունից սուբսիդավորման գումարների ստացման օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է հայտում նշված վարկի սուբսիդավորվող տոկոսադրույքի փոխանցումը ՖԿ-ի բանկային հաշվին.

8) ՖԿ-ն հայտը ներկայացնում է ՏԶՖԿ-ին էլեկտրոնային կամ փաստաթղթային ձևով.

9) ՖԿ-ն վարկառուի հետ վարկի տրամադրման պայմանագրի կնքման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի և վարկի մարման ժամանակացույցի պատճենները ներկայացնում է ՏԶՖԿ-ին.

10) հայտի ձևը մշակվում է ՏԶՖԿ-ի կողմից:

21. Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման դադարեցումը և ավարտը՝

1) վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը դադարում է հետևյալ հիմքերով, եթե՝

ա. առկա են տվյալ վարկի վերաբերյալ վարկառուի նախորդ մեկ տարվա (12 ամիսներ) կտրվածքով հանրագումարային 90 օրվանից ավելի ժամկետանց պարտավորություններ ՖԿ-ի հանդեպ կամ ՖԿ-ի հանդեպ ունեցած ժամկետանց պարտավորությունների հետևանքով վարկերի դասակարգման վերաբերյալ գործող կարգի համաձայն վարկը ստանդարտ դասով դասակարգված չէ,

բ. վարկն օգտագործվել է ոչ նպատակային և (կամ) սուբսիդավորման պայմաններին ոչ համապատասխան: Վարկառուի կողմից վարկի ոչ նպատակային և (կամ) սուբսիդավորման պայմաններին ոչ համապատասխան օգտագործում է համարվում, եթե

վարկային միջոցներն օգտագործվել են ՖԿ-ի և վարկառուի միջև կնքված վարկային պայմանագրով սահմանված պայմաններին ոչ համապատասխան.

2) ՖԿ-ն, վարկի նպատակային օգտագործման իր կողմից կատարված մոնիթորինգի արդյունքի հիման վրա՝ վարկը ոչ նպատակային օգտագործելու փաստի արձանագրման կամ ՏԶՖԿ-ի կողմից կատարված մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված ծրագրի պայմանների խախտումների մասին կազմված համապատասխան եզրակացության ստացման դեպքում՝ վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման դադարեցման մտադրության մասին անմիջապես գրավոր տեղեկացնում է շահառուին՝ գրությունը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում բացատրություններ կամ դիտարկումներ ստանալու նպատակով.

3) շահառուից բացատրություններ կամ դիտարկումներ ստանալուց հետո ՖԿ-ն անմիջապես կազմակերպում է քննարկում շահառուի և ՏԶՖԿ-ի մասնակցությամբ և քննարկման արդյունքներով կայացնում որոշում վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը դադարեցնելու կամ սուբսիդավորումը շարունակելու վերաբերյալ.

4) սույն կետի 2-րդ ենթակետում նշված ժամկետում շահառուից բացատրություններ կամ դիտարկումներ չստանալու կամ սույն կետի 3-րդ ենթակետում նշված քննարկման արդյունքում վարկի սուբսիդավորումը դադարեցնելու մասին որոշում կայացվելու դեպքում ՖԿ-ն դադարեցնում է վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը և հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է շահառուին, ՏԶՖԿ-ին և նախարարությանը.

5) ծրագրի շրջանակներում սուբսիդավորումը դադարեցվում է տվյալ վարկի մարման ժամանակացույցով սահմանված վարկառուի վերջին մարման օրվանից սկսած.

6) վարկառուի կողմից վարկի ոչ նպատակային և (կամ) սուբսիդավորման պայմաններին ոչ համապատասխան օգտագործման դեպքում մինչև այդ պահը տրամադրված սուբսիդավորման գումարը ենթակա է վերադարձման խախտումը հայտնաբերելու օրվան հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում՝ կիրառելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի N 283-Ն

որոշմամբ սահմանված հաշվարկային դրույքի չափով տուգանք: Սուբսիդավորված գումարի վերադարձը ՏԶՖԿ-ին իրականացնում է ՖԿ-ն.

7) վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման ավարտը համապատասխանում է այն ժամկետի ավարտին, որը պետք է սահմանված լինի ՖԿ-ի և վարկառուի միջև կնքված վարկային պայմանագրով՝ ծրագրի 19-րդ կետի պահանջներին համապատասխան:

3. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

22. Ծրագրի մոնիթորինգն իրականացնում են ՖԿ-ն և ՏԶՖԿ-ն՝ ՖԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվության և բոլոր վարկառուների ուսումնասիրության հիման վրա: Մոնիթորինգն իրականացվում է փաստաթղթային ուսումնասիրության և հարցումների միջոցով:

23. Ծրագրի մոնիթորինգի իրականացման ընթացքում ՏԶՖԿ-ն ՖԿ-ներից և շահառուներից կարող է պահանջել լրացուցիչ այլ տեղեկատվություն: Ընդ որում՝ գաղտնիք պարունակող տեղեկությունների դեպքում ՖԿ-ն և շահառուն ապահովում են համապատասխան համաձայնությունների ձեռքբերումը:

24. Այն դեպքում, եթե ՏԶՖԿ-ն մոնիթորինգի արդյունքում հայտնաբերում է ծրագրի պայմանների խախտում, ապա այդ մասին կազմվում է համապատասխան եզրակացություն և խախտումը հայտնաբերելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է նախարարությանը և ՖԿ-ին:

25. ՏԶՖԿ-ն յուրաքանչյուր ամիսը մեկ՝ ամսվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում ամփոփ հաշվետվություն է ներկայացնում նախարարություն՝ համաձայն ձևի:

Ձև

Սուբսիդավորող՝
ՀՀ ԷՆ «Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկ
Հաշվետու ժամանակահատված՝ .... 20.....թ. - .... 20.....թ.
Հաշվետվության ներկայացման ամսաթիվ՝
Ներկայացվող կառույցի անվանումը՝

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն N _____
ԽԱՂՈՂ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Աճողական հաշվետվություն														
NN ը/կ	վարկառու				վարկ							սուբսիդավորում			այլ
	(անվանումը)	հասցե		վարկի պայմանագրային գումարը (մլն դրամ)	վարկի տրամադրման ամսաթիվը	վարկի ծախսի չափը, ըստ ուղղությունների (մլն դրամ)		վարկի ավարտի ամսաթիվը	վարկի արտոնյալ ժամկետի ավարտի ամսաթիվը	հաշվետու ժամանակահատվածում վարկի մնացորդը (մլն դրամ)	վարկի տարեկան տոկոսադրույքը (%)	հաշվետու ժամանակահատվածում վճարված տոկոսագումարը (մլն դրամ)	սուբսիդավորման ենթակա տոկոսային կետը	սուբսիդավորված գումարը (աճողական) (մլն դրամ)	հայտնաբերված խախտումները
		մարզը	համայնքը			հարկ	աշխատավարձ								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

Հարգանքով՝
_____

Սուբսիդավորող
_____ _____
Լիազորված անձ՝ պաշտոնը, անունը, ազգանունը ստորագրությունը, կնիքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ